



# Ազգաբարոյաբան Trumpet's Sound **փող**

55-ԻԴ ՏԱՐԻ, ԱԲՏՐԱԼԻԱ  
ՅՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2024



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՎ»  
Երկամսյա հոգեւոր թերթ

Պատասխանատու խմբագիր՝  
հովիւ Հրաչ Գուլյուճեան

ACM AUSTRALIA  
PO BOX 1593,  
CHATSWOOD NSW 2057  
EMAIL: hkiujian@acmaust.org  
URL: www.acmaust.org



### Աղօթքի նիւթեր

- Շնորհակալութի՛ն յայտնեցէք Տիրոջը գիւղերուն մէջ ACM-ի մանկական ծառայութիւններուն համար:
- Շնորհակալութի՛ն յայտնեցէք Տիրոջը CEF-ի բանակումներու եւ Տիրոջը դարձի եկած շատ մանուկներու համար:
- Աղօթեցէ՛ք մեր միսիոներական խումբի ծառայութեան համար, որը պիտի մեկնարկի Օգոստոսի 31-ին:
- Աղօթեցէ՛ք Աւստրալիայէն փախստականներուն համար ուղարկուած ապրանքներու բաշխման աշխատանքներուն համար:
- Աղօթեցէ՛ք Հայաստանի խաղաղութեան համար:
- Աղօթեցէ՛ք աշխարհի խաղաղութեան համար:
- Աղօթեցէ՛ք, որ Տէրը վերադառնայ եւ Իր կամքը կատարուի:

### Բովանդակութիւն

Սրբութիւն . . . . . 3  
*Հովիւ` Հրաչ Գուլյուճեան*

Պօղոսի աղօթքը Կողոսացիս թուղթին  
մէջ . . . . . 4  
*Նէլ Պուքման*

Յովնանի պատգամը . . . . . 6  
*Տոն Սթորմր*

Ապաշխարութիւն (1) . . . . . 9  
*Ծորճ Հատկ*

Դատաւորը ներում ստացաւ . . . . . 13  
*Քաղուած*

Մեր ուշադրութիւնը Լիբանանի վրայ Է . 15  
*Տօթթ. Ղանկիէլ Ճէյմս*

**Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով:**

## Սրբութիւն

Մեր առօրեային մէջ ոչ յաճախ օգտագործուած բառերէն մէկը սրբութիւնն է, սակայն այս բառին յաճախ կը հանդիպայինք Աստուածաշունչին մէջ: Այն հիմնականին կապուած է Աստուծոյ հետ. *«Բարձրացուցէ՛ք Տէրը, մեր Աստուածը ու երկրպագույթիւն լրէ՛ք անոր սուրբ լերանը վրայ. վասն զի Տէրը, մեր Աստուածը, սուրբ է»* (Սաղ. 99:9):

Հռովմ. 3-րդ գլուխը մեր մասին կը խօսի, որպէս Աստուծոյ փառքէն զրկուած մեղաւորներ: Մենք պէտք է մաքրուինք: Հայրը կը փափաքի մեզ սրբուած տեսնել: Յիսուսը միակ Անձն է եւ միակ ճանապարհն է: Հարցը, որը բնականաբար կը հնչէ սա է. «Արդեօ՞ք մաքրուած ես Գառնուկին արեամբ»: Արդեօ՞ք աւելի լաւ մաքրուելու միջոց կայ:

Սուրբ ըլլալ կը նշանակէ՝ Աստուծոյ օգտագործման համար առանձնացած, կամ՝ Աստուծոյ համար զատուած (Ա Կորնթ. 6:11): Մենք պէտք է ամէն օր Աստուծոյ ներկայութեան մէջ գանք, որպէսզի քննենք մեր անձերը ու մաքրուինք: Մտածեցէ՛ք, թէ օրուայ մէջ քանի անգամ կը լուանք մեր ձեռքերը:

Պետրոսը գրեց. *«Հասցա՛ ձեզ կանչող Սուրբին պէս դուք ալ սուրբ եղէ՛ք ձեր բոլոր վարմունքներուն մէջ: Վասն զի գրուած է. «Սուրբ եղէ՛ք, քանզի ես սուրբ եմ»»* (Ա Պետ. 1:15-16):

Երբեմն բաւարարուած կը զգանք մեր քրիստոնէական կեանքով եւ կիրակի օրերը եկեղեցի յաճախելով: Բայց այս մասին Աստուածաշունչը կ'ըսէ. *«Առանց ասոր (սրբութեան) մէ՛կը պիտի չտեսնէ Տէրը»* (Եբր. 12:14):

Դաւիթ հարցը կուտայ ու կը պատասխանէ. *«Երիտասարդը ինչո՞վ մաքրէ իր ճամբան: Զու խօսքիդ համեմատ անոր զգուշութիւն ընելով»* (Սաղ. 119:9):

Արդեօ՞ք Դաւիթի քաջութիւնը ունինք՝ Տիրոջ մօտ գալու եւ խնդրելու. *«Փորձէ՛ զիս, ո՛վ Աստուած ու գիտցի՛ր իմ սիրտս. Չիս քննէ՛ ու գիտցի՛ր իմ մտածումներս եւ նայէ՛ թէ՛ արդեօք չար ճամբու մէ՞ջ եմ եւ զիս դէպի յախտեանական ճամբան առաջնորդէ՛»* (Սաղ. 139:23-24):

Թող Տէրը մեզ խոնարհութիւն եւ իմաստութիւն տայ, քանի որ վերջին օրերուն մէջ կ'ապրինք:

«Եւ դուք սուրբ պիտի ըլլաք ինծի. քանզի ես՝ Տէրս՝ սուրբ եմ ու ձեզ միւս ազգերէն զատեցի, որպէս զի իմս ըլլաք» (ՂԵԼՍ. 20:26):

Հ. Գ.

## **Պօղոսի աղօթքը Կողոսացիս թուղթին մէջ**

«Անոր համար մենք ալ, այն օրէն երբ լսեցինք, չենք դադարիդ ձեզի համար աղօթելէ ու խնդրանք մատուցանելէ, որպէս զի կատարեալ ըլլաք անոր կամքին գիտութիւնովը, լեցուիք իմաստութիւնով ու հոգեւոր հանճարով: Որպէս զի դուք Տէրոջը արժանի կերպով քալէք եւ ամէն քանի մէջ զինք հանեցնէք, բարի գործերով պտղաբերիք ու աճիք՝ Աստուծոյ գիտութիւնովը. Իր փառաւոր զօրութեանը համեմատ բոլոր ուժով զօրացած՝ համբերութեան ու երկայնմտութեան համար ուրախացած: Գոհանալով Հօր Աստուծմէ, որ մեզ յոյսի մէջ բնակող սուրբերուն վիճակին մասնակից ըլլալու արժանացուց» (Կող. 1:9-12):

Թէեւ Պօղոսը Կողոսեայ չէր այցելած, սակայն Եպափրասի եւ, հաւանաբար այլ հաւատացեալներու կողմէ լսած էր այնտեղի հաւատացեալներու հաւատքի եւ բոլոր սուրբերու հանդէպ անոնց ունեցած սիրոյ մասին: Ինչպիսի՛ քաջալերանք էր նման լուր լսելը մեծ դժուարութիւններու միջով անցնող առաքեալի համար, ով իր հաւատքին համար բանտարկուած էր: Իսկապէս, չէ՞ որ մենք նոյնպէս մեծապէս քաջալերուած կ'ըլլայինք՝ լսելով Տիրոջ ժողովուրդի նման համբաւ ունեցող հաւաքոյթի մասին:

Սակայն Պօղոսը գիտէր, որ անոնց համար շատ աւելին կար, եւ ասիկա դրդեց զինք անոնց համար շարունակ աղօթելու: Պօղոսի՝ Կող. 1:9-12-ի մէջ անոնց համար ըրած աղօթքէն կը հասկնանք անոնց հանդէպ իր ունեցած փափաքը, ինչպէս նաեւ կը տրվինք թէ ինչպէս պէտք է աղօթենք մեր եւ մեր շրջապատի համար:

Պօղոսի առաջին խնդրանքն այն էր, որ անոնք կատարեալ ըլլան անոր կամքին գիտութիւնովը, լեցուին իմաստութիւնով ու հոգեւոր հանճարով: Առակ. 4:3-7-ին մէջ այսպէս նաեւ Դաւիթը խրատեց իր որդի՝ Սողոմոնին. «*Ամէն բանին գլուխը իմաստութիւնն է, իմաստութիւն ստացիր*»: Գիտութիւնը կարելոր է, բայց իմաստութիւնն աւելի կարելոր է: Մենք չենք կրնար Աստուծոյ Խօսքին հանդէպ անտեղեակ ըլլալ, բայց մեզ անհրաժեշտ է հոգեւոր իմաստութիւն եւ հասկացողութիւն՝ զանազանելու Իր կամքը: Այսպէս կը սկսի Պօղոսի աղօթքը Կոդոսեայի հաւատացեալներուն համար, եւ այսպէս ընելով ան իր յաջորդ խնդրանքին հիմքը կը դնէ:

*«Որպէս զի դուք Տէրոջը արժանի կերպով քալէք եւ ամէն բանի մէջ զինք հանճեցնէք, բարի գործերով պտղաբերիք ու անիք՝ Աստուծոյ գիտութիւնովը»:* Ինչպիսի՜ փառահեղ աղօթք: Արդեօ՞ք ձեր սիրտը կ'արձագանքէ ըսելով. «Այո՛, այո՛, սա իմ ամբողջ ցանկութիւնն է»: Աստուծոյ շնորհքով այս աղօթքը կարող է պատասխանուիլ ձեր եւ իմ կեանքիս մէջ: Մենք կրնանք սորվիլ Տիրոջը արժանի կերպով քալել եւ լիովին Իրեն հանճելի ըլլալ: Մտածեցէ՛ք ասոր մասին: Ինչպիսի՜ արտօնութիւն: Ինչպիսի՜ ուրախութիւն: Այո՛, վճարելու զին կայ: Այո՛, դժուար ժամանակներ պիտի գան: Բայց նման բաները ոչինչ են այն փառքի համեմատ, որը պիտի յայտնուի, երբ Տէր Յիսուսը վերադառնայ:

1-ին Սաղմոսին մէջ կը տեսնենք պտղաբերութեան գեղեցիկ պատկեր մը: Տէր Յիսուսը սորվեցուց մեզ, որ մեր պտղաբերութեամբ Հօրը կը փառաւորենք (Յովհ. 15:8): Սուրբ Հոգին կ'օգտագործէ մեր կեանքի փորձառութիւնները, որպէսզի «անիք Աստուծոյ գիտութիւնովը», եւ սա կը խորացնէ մեր հաւատքը եւ յարատեւելու մեր եռանդը:

Պօղոսը շատ լաւ գիտէ, որ սա նեղ ու դժուար ճանապարհ է, ուստի կ'աղօթէ, որ հաւատացեալները Աստուծոյ զօրութեամբ զօրանան, այն զօրութեամբ, որը թոյլ կուտայ ամենատկար սուրբին համբերել եւ յարատեւել ուրախութեամբ եւ մեծ երախտագիտութեամբ:

Եկէ՛ք հետեւինք Պօղոսի օրինակին եւ համարձակօրէն աղօթենք այս աղօթքը միմեանց համար: Այններշնչուած էր Սուրբ Հոգիէն: Աստուած կ'ուզէ մեծ բաներ իրականացնել Իր ծառաներու կեանքին մէջ՝ ի փառս Քրիստոսի, որը մեր կեանքն է:

## Յովնանի պատգամը

### Աստուած կարեկից է

**Յ**ովնանի մարգարէութիւնը կարդալով կը տպաւորուինք հետեւեալ երկու կարեւոր ճշմարտութիւններով. Առաջինը կը վերաբերի Աստուծոյ ճշմարտութեանը եւ Իր ուղիներուն, իսկ երկրորդը՝ մարդու էութեանը, յատկապէս՝ Աստուծոյ ծառաներու:

#### Աստուծոյ մասին ճշմարտութիւնը

Յովնանի գիրքը կը բացայայտէ Աստուծոյ էութեան եւ ուղիներու շատ հայեցակարգեր: Մարգարէութեան գլխաւոր նիւթերն են՝ Աստուծոյ գերիշխանութիւնը եւ Անոր ողորմութիւնն ու ներողամտութիւնը: Աստուծոյ գերիշխանութիւնը կը տեսնուի բնութեանը կառավարելու մէջ, ինչպէս նաեւ այն կերպին մէջ որով Աստուած կ'ակնկալէ Իր ծառաներու հնազանդութիւնը: Երբ անոնք անհնազանդ կը գտնուին, ապա Ան իրաւունք ունի քայլեր ձեռնարկելու, որպէսզի Իր կամքը կատարուի:

Աստուած, ով կը վերահսկէ տիեզերքը, կ'առաջնորդէ Իր ծառաներուն, որպէսզի անոնք գտնուին այնտեղ, որտեղ Ան կ'ուզէ, որ անոնք ծառայեն Իրեն եւ կ'ակնկալէ, որ անոնք ամբողջ սրտով հնազանդին Իրեն, նոյնիսկ եթէ այդ կը նշանակէ կատարել բան մը, որը հաճելի չէ իրենց համար, օրինակ՝ Իր պատգամը հասցնել ազգային թշնամիին: Եւ եթէ Ան որոշած է, որ պատգամը պետք է Նինուէ հասցուի, ինչպէս եղաւ այս պատմութեան մէջ, ապա այն պետք է հասցուի: Աստուծոյ ուզածը միշտ կը կատարուի: Նմանապէս, երբ Տերը Երուսաղէմ մտաւ, եւ փարիսեցիները դժգոհեցին մարդկանց ըրած աղմուկի համար, Տիրոջ պատասխանը շատ յստակ էր: Եթէ ժողովուրդը չճանչնար զինք որպէս Մեսիայ, ապա քարերը պիտի փառաւորէին զինք (Ղուկ. 19:40): Սա այն օրն էր, որ Մեսիան պետք է հռչակուէր, եւ ոչինչ չէր խանգարեր կամ չէր կրնար խանգարել Աստուծոյ կամքին կատարմանը:

Աստուած անհնազանդութիւնն ու ապստամբութիւնը կը պատժէ: Յովնանը չհնազանդեցաւ Նինուէ երթալու Աստուծոյ հրահանգին՝ փոխարէնը փորձեց Թարսիս փախչիլ: Ան պետք է սորվէր, որ Տիրոջը չհնազանդուելով անպատիժ պիտի չմնար:

Աստուծոյ օգտագործած պատժի ձեւերը նախատեսուած են մեզ Իր ճանապարհները սորվեցնելու համար: Երբեմն ձեւերը խիստ են, ինչպէս, երբ Յովնանին ծովը նետեցին եւ մեծ ձուկը կլկեց զինք: Երբեմն աստուծոյ արեւի թեթեւ են, բայց Աստուծոյ ձեւերը դեռեւս նպատակ ունին մեզ Իր ուղիները սորվեցնելու: Այսպիսով, Աստուած Յովնանի համար բոյս աճեցուց, որպէսզի ան ստոր ստուերին տակ հանգստանայ, իսկ յետոյ արագ հեռացուց այն՝ Յովնանին Իր ողորմածութեան մասին սորվեցնելու համար: Յովնանը զայրացաւ, որ բոյսը չորցաւ, չնայած ան կապ չունէր բոյսի ստեղծման կամ աճելուն հետ: Աստուած կ'ուզէր, որ Յովնանը իմանայ, որ Նինուէի ժողովուրդը Իր ստեղծած ժողովուրդն է, եւ Ան իրաւունք ունի անոնց մասին մտահոգուելու: Ասոր մէջ ներառուած է ողորմած ըլլալու Իր իրաւունքը բոլոր անոնց հանդէպ, ովքեր կ'ապաշխարեն:

Աստուծոյ ներողամտութեան պատգամը կանգ չի առնէր ազգային սահմաններով: Սա հակառակ է Յովնանի՝ թշնամիի հանդէպ սիրոյ պակասին: Աստուած ողորմած է եւ կը ներէ բոլոր անոնց, որոնք կ'ապաշխարեն: Ան ողորմած է, դանդաղ է բարկանալու մէջ եւ առատ ողորմութեամբ: Յովնանը գիտէր սա եւ չէր ուզէր այդպէս ըլլար: Բայց մենք կրնանք երախտապարտ ըլլալ, որ Աստուած կը ներէ բոլոր անոնց, որոնք ապաշխարութեամբ Իրեն կը դիմեն: Պատգամը, որը Տէրը հրոշակեց Մովսէսին Ելից 34:6-7-ի մէջ, կը մնայ ճշմարիտ.

*«Տէրը, Տէր Աստուածը, ողորմած ու բարեբար, երկայնամիտ եւ առատ՝ ողորմութիւնով ու ճշմարտութիւնով, հազարներուն ողորմութիւն ընող, անօրէնութիւնը, յանցանքը ու մեղքը ներող, բայց յանցաւորը ամենեւին անպարտ չի թողուր, հայրերուն անօրէնութիւնը որդիներուն վրայ ու որդիներուն որդիներուն վրայ, մինչեւ երրորդ ու չորրորդ ազգը հաստուցանելով»:*

Նինուէի ժողովուրդին տրուած ներումը Երեմիային ըսուած ճշմարտութեան վառ օրինակ է (18:7-10).

*«Երբ ազգի մը կամ թագաւորութեան մը համար ըսելու ըլլամ թէ պիտի քակեմ, պիտի փլցնեմ ու պիտի կորսնցնեմ, բայց եթէ այն ազգը, որուն վրայով խօսեցայ, իր չարութենէն դառնայ, Ես ալ պիտի չընեմ այն չարիքը, որ մտածեմ էի անոր ընել: Իսկ երբ ազգի մը կամ թագաւորութեան մը համար ըսելու ըլլամ թէ պիտի շինեմ ու պիտի տնկեմ, բայց եթէ անիկա իմ*

*խօսքիս մտիկ չընելով՝ իմ առջեւ չարութիւն ընէ, Ես ալ պիտի չընեմ այն բարիքը, որ խոստացեր էի անոր ընել»:*

Աստուած նաեւ գերիշխան է եւ բացարձակ վերահսկողութիւն ունի բնութեան վրայ: Իր գերիշխանութիւնը երեւցաւ այն ամէնուն մէջ, ինչ պատրաստեց Յովնանի համար: Նշուած է հինգ բան. Առաջինը փոթորիկը (1:4), որ Աստուած ուղարկեց Իրմէ փախչող անհնազանդ մարգարէին կանգնեցնելու համար: Աստուծոյ մտադրութիւնն այն էր, որ ի վերջոյ Յովնանը կատարէ այն, ինչ իրեն ըսուած էր: Երկրորդը՝ մեծ ձուկն էր (1:17), որը նախատեսուած էր մարգարէի կեանքը փրկելու համար, որպէսզի ապագային ան իսկապէս կատարէ Աստուծոյ կամքը: Յաջորդը դդմենին էր (4:6), Աստուծոյ կողմէն տրուած միջոց՝ մարգարէի կեանքն աւելի հեշտացնելու համար, մինչ Ան Իր ողորմութիւնը պիտի ցուցադրէր: Գրեթէ անմիջապէս յետոյ Աստուած պատրաստեց որդը (4:7) դդմենին ոչնչացնելու համար, որպէսզի Յովնանին այնպիսի իրավիճակի մէջ դնէ, որտեղ ան Աստուծոյ ողորմած բնաւորութեան մասին աւելի լուրջ մտածէ: Վերջապէս արեւելեան քամին (4:7) ուղարկուեցաւ որպէս վերջին քայլ, որով Յովնանին ցոյց տրուեցաւ, որ Աստուած ողորմած Աստուած է: Այս ամէնը կատարուեցաւ այն ժամանակ, երբ Աստուած կամեցաւ:

### **Ի՞նչ դասեր կան մեզ համար:**

- Աստուած կը վերահսկէ բնութիւնը, բնութեան բոլոր տարրերը՝ փոթորիկը, ձուկը, դդմենին, որդը, քամին... այս ամէնը Իր տրամադրութեան տակ են, եւ Ան կարող է եւ պիտի օգտագործէ այս ամէնը Իր փառքին համար:
- Աստուած Իր ծառաներէն հնազանդութիւն կ'ակնկալէ: Եթէ չհնազանդիմք, ապա չենք կարող ակնկալել, որ Ան պիտի անտեսէ մեր մեղքը:
- Եթէ Աստուած ուզէ Իր պատգամը ազգի մը կամ խումբի մը հասցընել, ապա Ան կարող է անհնազանդներին հնազանդ դարձնել, կամ կարող է օգտագործել մէկ այլ միջոց: Մուրթքեն սա գիտէր, երբ Եսթերին ըսաւ. «*Վասն զի այս ժամանակին մէջ եթէ դուն լռես, չընաներուն ուրիշ տեղէ մը օգնութիւն ու ազատում պիտի գայ, բայց դուն ու քու հօրդ տունը պիտի կորսուիք եւ ո՛վ գիտէ, թերեւս դուն*

*այսպիսի ատենուան մը համար թագուհի եղար» (Եսթեր 4:14):*

- Աստուած չուզէր ամբարիշտի մահը: Իր կամքն այն է, որ մարդիկ ապաշխարեն եւ Իրեն ծառայեն: Ան կարեկից է, եւ մենք կարող ենք շնորհակալութիւն յայտնել Իրեն Իր շնորհքին համար:
- Աստուած ե՛լ գերիշխան է, ե՛լ ողորմած: Ան ողորմած է, դանդաղ է բարկանալու մէջ եւ առատ ողորմութեամբ: Ովքեր կ'ապաշխարեն, անոնց մեղքերը կը ներուին:

Տոն Սթորմը

## **Ապաշխարութիւն – դառնալ՝ ճշմարիտ Աստուծոյ հետեւելու համար (1)**

2013 թ.-ին ընկերոջս հետ Կապոյտ լեռներուն վրայ գտնուող Կլեն-պրուք կիրճով քալեցինք մինչեւ Լափսթոուն երկաթուղային կայարան: Ես քարտեզ ունէի, որուն պէտք է հետեւէի: Կիրճէն դուրս հասանք խաչմերուկ մը, բայց ես չէի գիտեր, թէ ուր կը գտնուէինք քարտեզին վրայ: Այնպէս որ, չէի գիտեր՝ կայանը ձախ կողմն է, թէ՛ աջ: Մօտաւորապէս 15 վայրկեան քալեցինք դէպի հիւսիս, իսկ յետոյ զոջացինք (դարձանք), որովհետեւ հասկցանք, որ կայանը հաւանաբար հարաւի կողմն էր: Մենք պէտք է 180 աստիճանով դառնայինք, որպէսզի հասնէինք մեր նպատակակէտին: Քանի որ այս սխալի պատճառով վատնեցինք առնուազն կէս ժամ, ես որոշեցի բջջային հեռախօս ձեռք բերել, որպէսզի կարողանամ GPS-ը օգտագործել, ինչպիսին՝ Google maps-ն է՝ ցոյց տալու, թէ ուր կը գտնուիմ քարտեզին վրայ:

Վերջերս կինս նման փորձառութիւն մը ունեցաւ: Ան մեղրոյով մեկնեց Միսսիսի հիւսիս-արեւմուտք՝ ինծի հետ հանդիպելու, այնուհետեւ թերուեցաւ դէպի հարաւ-արեւմուտք: Որոշ ժամանակ անց զոջաց (դարձաւ), որովհետեւ հասկցաւ, որ ես հիւսիս-արեւելքի վրայ կը գրտնըուիմ: Այսպիսով, դուք կրնաք սխալներ թոյլ տալ, եթէ չէք օգտագործեր ձեր GPS-ը:

Մենք բոլորս սխալներ կը գործենք: Մենք ունինք տկարություններ եւ ձախողություններ, եւ ժամանակ առ ժամանակ սխալ ուղղությամբ կ'ընթանանք: Մենք բոլորս երբեմն Աստուծոյ կամքին հակառակ կը գործենք: Մենք բոլորս կարող ենք վարուիլ այնպէս, կարծես անելի կարելոր ենք, քան Աստուած: Աստուածաշունչը սա մեղք կ'անուանէ. մեղքը այն ամէնն է ինչ կը մտածենք, կը խօսինք կամ կը գործենք, որը հակառակ է Աստուծոյ կամքին: Աստուածաշունչը ցոյց կուտայ, թէ ինչպէս պէտք է վարուինք նման իրավիճակներու մէջ, որպէսզի Աստուծոյ յաւիտենական ներումը ստանանք ու վերականգնուինք մեր ինկամ վիճակէն: Այն կ'ենթադրէ մեր ձախողություններէն հեռանալ եւ դէպի Աստուած դառնալ: Այդ նման է շրջադարձ կատարելուն: Ապաշխարութիւնն այն է, երբ մենք կը հեռանանք մեր ձախողություններէն ու փոխարէնը կը դառնանք դէպի ճշմարիտ Աստուած:

### **Սահմանում**

Աստուածաշունչին մէջ ապաշխարութիւնը նախկին վարքագիծէն, վերաբերմունքէն կամ կարծիքէն հրաժարիլն է: Այն մտափոխութիւն է: Նոր Կտակարանին մէջ այն գլխաւորապէս օգտագործուած է անաստուած պահուածքէ, վերաբերմունքէ կամ կարծիքէ (մեղք) ապաշխարելու կապակցութեամբ, եւ այս մտքի փոփոխութիւնը կը ներառէ ձախողութիւնէ (մեղքէ) դարձի գալ դէպի Աստուած:

Եթէ մտափոխուած էք Աւստրալիայի Woolworths սուփերմարքեթէն գնուած ապրանքի վերաբերեալ, ապա խանութը կրնայ փոխանակել այն, բայց գումարի վերադարձ չեն տրամադրեր: Իսկ առաքումէ 14 օրուայ ընթացքին Samsung-ը առցանց գնուած բջջային ապրանքի փոխանակում կամ փոխհատուցում կը տրամադրէ, եթէ ապրանքը օգտագործուած չէ եւ վերավաճառուելու վիճակի մէջ է: Այսպիսով, ինչ-որ բանի մասին ձեր կարծիքը փոխելը բնական է:

### **Ապաշխարութեան օրինակներ Հին Կտակարանին մէջ**

Ադամն ու Եւան ապստամբեցին ու Աստուծոյ չինազանդեցան (մեղանչեցին): Այս պատճառով մարդկութիւնը ապստամբ բնութիւնը ժառանգեց: Անոնք եսակեդրոն դարձան, եւ իրենց եւ տիեզերքը ստեղծող Արարիչ Աստուծոյ յարգելու կամ հնազանդելու կարիքը չտեսան:

Տասը սերունդ անց մարդկությունն ընդհանրապես չար էր ու փչացած (Ծննդ. 6:5-2): Մինչ Նոյը տապանը կը կառուցէր, ան աշխարհին նախագգուշացուց Աստուծոյ արդար դատաստանի մասին (Բ Պետ. 2:5): «*Հաւատքով... աշխարհս դատասպարտեց*» (Եբր. 11:7): Աստուած Նոյի միջոցով պատգամ ուղարկեց, երբ վերջինս տապանը կը կառուցէր (Ա Պետ. 3:19-20): Նոյի ժամանակակից ամբարիշտ մարդիկ առիթ ունեցան Աստուծոյ դառնալու (ապաշխարելու): Յաւօք, անոնք ապրտամբեցան ճշմարտութեան դէմ եւ հրաժարեցին տապան մտնել ու խեղդուեցան ջրհեղեղին մէջ: Սա ցոյց կուտայ, որ ապաշխարութեան բացակայութիւնը կը յանգեցնէ Աստուծոյ դատաստանին:

Մ.թ.ա. 1000 թ.-ին Իսրայէլի թագաւոր Դաւիթը հնարաւորութիւն ունէր դարձի գալու եւ Աստուծոյ հետեւելու (ապաշխարելու): Նաթան մարգարէն յանդիմանեց Դաւիթին Բերսաբէի հետ շնութեան եւ անոր ամուսինի՝ Ուրիայի սպանութեան համար (Բ Թագ. 12:1-19):

Այդ ժամանակ Դաւիթը Նաթանին ըսաւ. «*Տէրոջը դէմ մեղք գործեցի*» (Բ Թագ. 12:13): Ան ընդունեց եւ խոստովանեց իր մեղքը: Մեղքը Աստուծոյ դէմ էր եւ ոչ միայն այլ մարդկանց: Նաթանը պատասխանեց. «*Տէրն ալ քու մեղքդ ներեց*»: Այդ պատճառով Աստուած ներեց անոր մեղքերը (Բ Թագ. 12:13): Դաւիթի ներման ու մաքրման աղօթքը գրուած է Սաղ. 51-ի մէջ: Օրինակը հետեւեալն է. ընդունել, խոստովանել, ապաշխարել եւ ապա ներում գտնել:

Մ.թ.ա. 710 թ.-ին Եսայեան նշեց, որ ապաշխարութիւնը ներման կը հանգեցնէ: Ան Յուդայի ազգին դիմեց ըսելով.

«*Տէրը փնտռեցէք, քանի որ անհկա կը գտնուի. զանհկա՛ կանչեցէք, քանի որ անհկա մօտ է: Թող ամբարիշտը՝ իր ճամբայէն ու անօրէն մարդը իր խորհուրդներէն հրաժարի եւ Տէրոջը դառնայ ու անհկա պիտի ողորմի անոր ու մեր Աստուծոյն՝ վասն զի անհկա առատապէս կը ներէ*» (Եսայեայ 55:6-7):

Երբ ամբարիշտը Տէրոջը կը դառնայ (կ'ապաշխարէ), ապա Տէրը «*պիտի ողորմի անոր*» եւ «*առատապէս պիտի ներէ*» անոր: Կայ ներում:

Մ.թ.ա. 640 թ.-ին հրէական տաճարին մէջ Հին Կտակարանի Օրէնքի գիրքը գտնուեցաւ (Դ Թագ. 22:1-20): Երբ Յովսիա թագաւորը լսեց այս լուրը, ան իր հանդերձը պատռեց ու արտասուեց, քանի որ

հասկցաւ, որ ազգը Աստուծոյ օրէնքին չէր հնազանդած: Փոխարէնը անոնք կուռքերուն հետեւած էին, իսկ անոնց պատիժը կանխատեսուած էր օրէնքին մէջ: Այնուհետեւ ան նորոգեց իրենց ուխտը, որպէսզի Տիրոջը հետեւին եւ պահեն Անոր պատուիրանները (Դ Թագ. 23:1-24): Եւ բոլոր կուռքերը, կուռքերու գոհասեղանները եւ ազգի քրմերը կործանեց: Ապաշխարութիւնը ակնյայտ էր Յովսիա թագաւորի գործողութիւններուն մէջ: Անկիւնադարձ տեղի ունեցաւ, Աստուծոյ դատաստանէն Աստուծոյ ներումը վայելելու:

Հին Կտակարանի մարգարէներէն շատերը ապաշխարութեան կոչ կ'ուղղէին Իսրայէլի ազգին: Օրինակ՝ մօտաւորապէս մ.թ.ա. 520 թ.-ին Չաքարեան Յուդայի ազգին դիմեց. «*Անոնց ըսէ, գօրքերու Տէրը այսպէս կ'ըսէ. «Ինծի դարձէ՞ք ու ես ձեզի պիտի դատնամ, ձեր հայրերուն պէս մի՛ ըլլաք, որոնց առաջուն մարգարէները կոչ կ'ուղղէին՝ ըսելով. «Ձեր չար ճամբաներէն ու չար գործերէն դարձէ՛ք», բայց անոնք մտիկ չրրին ու ինծի ականջ չտուին» (Չաք. 1:3-4):*

Դարձի գալէն ետք Չաքարեան մարգարէացաւ Իսրայէլի վերականգնումը (Չաք. 1:6, 16-17): Այսպիսով, Հին Կտակարանին մէջ ապաշխարութեամբ ճշմարիտ Աստուծոյ հետեւելու հերթականութիւնը այսպիսին է՝ ընդունում (հասկնալ եւ ընդունիլ, որ սխալ ճանապարհով կ'ընթանաս), ապաշխարութիւն (Աստուծոյ դատնալ, զինք հետեւելու համար), ներում (Աստուծոյ ներումը) եւ ապա վերականգնում (Աստուծոյ ձեռքով):

Ճորճ Հոուք

Շարունակելի...



*«Վերջապէս ամէնքդ մէկ մտքի վրայ եղէք, կարեկից, եղբայրասէր, ողորմած ու քաղցրաբարոյ: Զըլլայ որ չարութեան փոխարէն չարութիւն հատուցանէք կամ նախատինքի փոխարէն՝ նախատինք, այլ ընդհակառակն՝ օրհնեցէք, գիտնալով որ այս բանին համար կանչուեցաք, որպէս զի օրհնութիւն ժառանգէք»:*

Ա, Պետ. 3:8-9

## Դատաւորը ներում ստացաւ

Քսան տարիներ վերջ անոնք դարձեալ դէմ դիմաց նստած էին: Միասին կը վերյիշէին անցեալի դէպքերը, ո՛չ որպէս դատաւոր եւ դատապարտեալ, այլ՝ իբր հին բարեկամներ: Մին դատաւորը Հանս Ռահմզն էր, միւսը՝ հոլանդացի միսիոնարուհի Քօրրի Դէն Գունը, որ միջազգային համբաւի տիրացած էր: Այս վերջինը երկու տարի գերի մնաց Նացի կեդրոնացման կայանի մը մէջ: Հոն՝ իր հօրը եւ եղբայրներուն հետ անլուր չարչարանքներու ենթարկուեցաւ, որովհետեւ մեծ թիւով հրեաներու փախուստին օգնած էր: Իսկ առաջինը՝ իր գերմանացի դատաւորի հանգամանքով՝ մի քանի անգամ պատժավճիռներ արձակած էր միսիոնարուհիին դէմ:

Սակայն Հոլանտայի ազատագրումով կացութիւնը փոխուած էր: Նացիներու պարտութիւնը, Ռահմզին պատերազմական դերիներուն տուած ազատութիւնը եւ որոշ չափով վերահաստատուած բնականոն վիճակը՝ դէպքերը շրջած էին: Միսիոնարուհին Բ. Համաշխարհային պատերազմին վերջանալէն ետք՝ առաջին անգամն էր որ Գերմանիա կ'այցելէր: Թէպէտեւ ինք շատ երկիրներ շրջած եւ դասախօսութիւններ տուած էր, սակայն այս ճամբորդութիւնը միւսներէն տարբեր էր՝ յի յուզիչ պահերով եւ ապրումներով:

- Դատաւոր Ռահմզ, ըսաւ Քօրրին, սեպենք թէ դատապարտեալ մը հազար մարք գողնայ: Արժէք մը կը ներկայացնէ՞ իր լաւ հայր մը եղած ըլլալը, կամ աղքատներուն մատուցած օգնութիւնը:
- Բնաւ երբեք, պատասխանեց Ռահմզ, եթէ անձ մը մէկ անգամ իսկ գողութիւն ընէ, ըստ օրէնքի պէտք է իր պատիժը կրէ:
- Դուք կը յիշէ՞ք ինչպէս, քսան տարիներ առաջ, իմ մէկ դատավարութեանս ընթացքին ինծի դէմ եղած փաստաթուղթերը կրակը նետեցիք:
- Այո՛: Այդ իմ բարի գործերէս մէկն էր:
- Սակայ, պարոն դատաւոր, այդ թուղթերուն վրայ ձեր մեղքերը գրուած էին: Աստուծոյ դատաստանին օրը այդ փաստաթուղթերը սե-

դանին վրայ պիտի դրուին, եւ այն ատեն անոնց պատիժէն խուսափիլ անկարելի պիտի ըլլայ: Ինչ որ դուք ինծի համար ըրիք քսան տարի առաջ՝ օրինակ մըն է Յիսուսի կատարած փրկագործութեան: Աստուած Սուրբ Գրքին մէջ կ'ըսէ թէ Քրիստոս լման քաւեց մեղ մեղքերն ու անօրէնութիւնները: Մենք իր օրէնքերն ու պատուիրանները չէինք պահած եւ անոնք մեզի դէմ վկայող ապացոյցներ էին: Սակայն Քրիստոս իր խաչին վրայ ջնջեց յանցանքները անոնք՝ որոնք Իրեն կը հաւատան, խոստովանելով իրենց մեղքերը:

Պահ մը խոր լռութիւն տիրեց: Այդ պահուն Քօրրի, ինչպէս իր բարի սովորութիւնն էր, աղօթք մատուց Տէրոջը՝ որուն մասին վկայած էր դատաւորին: Իսնդրեց որ պարոն Ռահմզին միտքն ու սիրտը բացուին՝ որպէսզի ան հասկնայ այս հոգեւոր ճշմարտութիւնները եւ իր մեղքերուն փրկութիւն ստանայ:

Յանկարծ ան ըսաւ. «Այո, հիմա յիշեցի իմ գործած մեղքերէս մին», եւ այդ պատճառ եղաւ որ դատաւորը ծունկի գայ եւ Տէրոջմէ ներում խնդրէ իր մեղքերուն համար: Երբ ոտքի ելաւ, երկուքը դարձեալ շարունակեցին իրենց խօսակցութիւնը հաւատքով Քրիստոսի յանձնուելու մասին: Այդ ժամուան ընթացքին՝ ամէն անգամ երբ դատաւորը իր գործած մեղքերը կը յիշէր՝ անմիջապէս անոնց համար ներում կը խընդրէր Տէրոջմէն:

Ուրախութիւնը այլեւս համակած էր դատաւորին էութիւնը, եւ դէմքը կը փայլէր: Իր կեանքին մէջ ան երբեք այսպիսի ներքին ցնծութիւն զգացած չէր: Մեկնելու պահուն Հանս Ռահմզ ըսաւ. «Կ'ուզեմ իմ կենսագրութիւնս ընել: Ես գիտեմ թէ պէտք է զայն սկսիմ իմ այսօրուան փորձառութենէս. Տեսայ որ ես մեղաւոր մըն էիմ, բայց հիմա՝ փրկուած մեղաւոր մըն եմ»:

Քաղուած՝ «Չմայլելի դրուագներ» գրքէն



## Մեր ուշադրութիւնը Լիբանանի վրայ է

Ռաֆֆի Չափարեան եղբօր եւ ինծի համար մեծ ուրախութիւն էր անցեալ տարի հնագոյն նաւահանգիստներ՝ Տիրոսն ու Սիդոնը այցելելը: Այս քաղաքները կը գտնուին Լիբանանի մէջ՝ Միջերկրական ծովի ափին: Աւելի հին քաղաք՝ Սիդոնը կը ենթադրուի, թէ գոյութիւն ունեցած է մ.թ.ա. 2000 թ.-ին:

Այս երկու քաղաքները յիշատակուած են ե՛ւ Հին ե՛ւ Նոր Կտակարաններուն մէջ: Տէր Յիսուսը կը նշէ ատոնց մասին Իսրայէլի կարծրացած սրտերու դատաստանի առնչութեամբ: Այնուամենայնիւ, շրջակայ տեղերէն մարդիկ կը փափաքէին լսել Տիրոջը:

*«Յիսուս իր աշակերտներուն հետ ծովեզերքը գնաց եւ շատ բազմութիւն անոր ետեւէն գացին Գալիլիայէն ու Հրէաստանէն, եւ Երուսաղէմէն ու Եդոմէն եւ Յորդանանի անդիի կողմէն ու անոնք ալ որ Տիրոսի ու Սիդոնի շրջակայ տեղերէն էին, մեծ բազմութեամբ, երբ լսեցին ինչ որ կ'ընէր»* (Մարկ. 3:7-8):

Այն, որ հեթանոս քաղաքներն աւելի բաց էին Տիրոջ ձայնին ակընյայտ է Փիւնիկեցի կնոջ վկայութեան մէջ, ով Տիրոջ մօտ եկաւ՝ իր աղջկան բժշկելու աղաչանքով. *«Կինը իր տունը երթալով, գտաւ որ դէռ եղած էր ու աղջիկը անկողնին վրայ պառկած էր»* (Մարկ. 7:30):

ACM-ը օրինուած է տեսնելով Լիբանանի ծառայութեան աճը: Այս չորս տարիներու ընթացքին, մեր աշխատակիցներ՝ Թալինն ու Մարալը, մի քանի կամաւորներու հետ, կարողացան վերահսկել շուրջ 36 ընտանիքներու աջակցութիւնը: Բացի մեր ինսամակալութեան տակ գրտնըռուող ընտանիքներէն, մենք կարողացանք սնունդի փաթեթներ տրամադրել նաեւ այլ ընտանիքներու, յատկապէս ձմռանը:

Այս ընտանիքներէն տասը սկսած է Հայ աւետարանական Եղբայրութեան եկեղեցի յաճախել: Մեր քոյրերը կարողացան նաեւ անոնց համար երթեւեկութիւնն ապահովել: Իսօսքի քարոզչութիւնն ու ուսուցումը կը շարունակուի:

Որպես կազմակերպություն, որն օրհնուած է Լիբանանի մէջ 2020 թ.-էն ի վեր Աւետարանը տարածելով, նաեւ շատ մտահոգուած է այնտեղի իրավիճակով, յատկապէս Իսրայելի հետ սահմանին: Մեր աշխատակիցները կը շարունակեն ծառայել սովորական եղանակով, թէւ անոնց բնակարանէն եւ աշխատավայրէն ոչ շատ հեռու պայթիւններ որոտացած են: Վերջին շրջանին տեղեկութիւններ ստացանք, որ օդանաւակայանը նոյնպէս վնասուած է: Արեւմըտեան երկրները իրենց քաղաքացիներուն խնդրած են լքել երկիրը: Աւստրալիական ավիաընկերութիւնները քայլեր ձեռնարկած են որոշ չուերթներու ուղղութիւնները փոխելու կապակցութեամբ:

Ամենայուսադրող մասն այն է, որ կարող ենք վկայել, թէ Աւետարանը կը շարունակուի հռչակուիլ: Մեր ընտանիքներուն պարբերաբար կ'այցելենք և հիւանդներուն սահմանափակ օգնութիւն կը ցուցաբերենք:

Մինչ կը շարունակենք աղօթքով ամբողջ երկիրը մեր Տիրոջը յանձնել, մենք կը յիշենք Յիսուսի խօսքերը. «*Կա՛յ քեզի, Քորազին, վա՛յ քեզի Բեթսայիդա, վասն զի եթէ Տիրոսի ու Սիդոնի մէջ եղած ըլլային այն հրաշքները, որոնք ձեր մէջ եղան, շատոնցմէ քորձով ու մոխիրով ապաշխարած պիտի ըլլային: Բայց ձեզի կ'ըսեմ, Տիրոսի եւ Սիդոնի ասելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը՝ քան թէ ձեզի» (Մատթ. 11:21-22):*

Տէր Յիսուսը կը մէջբերէ Տիրոսն ու Սիդոնը, որպէսզի յիշեցնէ մեզ, որ ընտրուած ազգի ինքնահաւանները մերժեցին զինք, մինչդեռ մնացած աշխարհը պատրաստ էր ընդունել Աւետարանի կոչը: Իսկապէս, Աստուծոյ Խօսքը եւ Իր Հոգին կը շարունակեն առաջնորդել մեզ, մինչ կը ծառայենք Տէր Յիսուս Քրիստոսին այս ծանր ժամանակներուն մէջ:

Տօքթ. Դանիէլ Ծէյմս